ՀԱՆԳԻՍՏ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ
(1891—1957)

Ստամբուլում հունիսի 2-ին վախճանվեց գերաշնորհ Տ. Գրիգորիս եպիսկոպոս Կարապետյանը։

Հանգուցյալը ծնվել էր 1891 թվականին Կոստանդնուպոլսում։ Նա իր ծնողների չորս զավակներից երրորդն է եղել։

Նախնական կրթությունը ստացել է իր ծննդավայրում։ Ուսանողական շրջանը ավարտելուց հետո մի առժամանակ զբաղվել է վաճառականությամբ, բայց վաղ տարիքից իր հոգում զգացել է սեր դեպի հոգևոր ասպարեզը։

1903 թվականին ստացել է դպրության շորս աստիճանները և մի քանի տարի անց ձեռնադրվել է սարկավագ։

1910 թվականին հիմնադիրներից և գործուն անդամներից մեկն է հանդիսացել «Կոմիտաս» երգչախմբի։ Իր գեղեցիկ ձայնական տվյալներով եղել է երգչախմբի ղեկավար։

1918 թվականից որպես դպրապետ պաշտոնավարել է Իզմիրի հայոց Ս. Ստեփանոս եկեղեցում իր ավագ եղբոր՝ հոգեշնորհ Տ. Հովսեփ վարդապետի առաջնորդության ժամանակ։

1919 թվականին Կոստանդնուպոլսի Կրոնական ժողովի որոշումով և Զավեն Պատրիարք Եղիայանի հավանությամբ Իզմիրում ձեռնադրվել է Կուսակրոն քահանա, Կեսարիայի Ս. Կարապետ վանքի վանահայր Տրդատ եպիսկոպոս Պալյանի շնորհաբաշխությամբ։

Ապա նա վարել է ուսուցչական պաշտոններ Երուսաղեմում և այլուր։

1921 թվականին հրավիրվում է Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցու խնամակալության կողմից որպես հոգևոր հովիվ։ Հանգուցյալ նահատակ Տ. Ղևոնդ Դուրյան սրբազանից ստանում է ծայրագույն վարդապետության աստիճան։

1927 թվականին նշանակվում է օգնական Բուլղարիայի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Ստեփանոս արքեպիսկոպոսի և ապա, ծերունազարդ առաջնորդի մահից հետո, վարում է թեմի առաջնորդությունը 18 երկար տարիներ։

1949 թվականից հետո մնում էր Ստամբուլում և զբաղվում էր առավելապես քարոզչությամբ։

Հանգուցյալ Գրիգորիս եպիսկոպոս Կարապետյանը քաջ ծիսագետ էր և մասնագետ՝ սրբազան երաժշտության։

1954 թվականին Կոստանդնուպոլսում նշվեց նրա քահանայության 35-ամյակը։

Սրբազանի մահը մեծ կարոտ է Հայ Եկեղեցու համար։

Հանգի՜ստ նրա հոգուն։